

**ՀՀ ֆինանսների նախարարություն**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/6**

**4 հունիսի 2014 թ.**

Քննարկվեց «Էլիփս ԹեքնոլաՅն» ՍՊԸ 30.04.2014 թ-ի դիմումով բերված պահանջը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ:

**«Էլիփս ԹեքնոլաՅն» ՍՊԸ դիմումում բերված փաստարկները.**

Սույն թվականի մարտի 30-ին Նոր Նորքի ՀՏ կողմից ստացվել է ծանուցում առ այն, որ «Էլիփս ԹեքնոլաՅն» ՍՊԸ-ի 01.01.2013 թ-ի դրությամբ առկա ԱԱՀ գծով դեբետային մնացորդը՝ գումարով 4,977,624 ՀՀ դրամ, ենթակա է զրոյացման և այն պետք է միացվի արտադրության և շրջանառության ծախսերին, ինչպես նաև 2013 թ-ի ընթացքում այդ գումարի նկատմամբ հաշվարկվել են տույժեր՝ գումարով 1,644,133 ՀՀ դրամ: Ընկերության ԱԱՀ-ի գծով ընդհանուր պարտավորությունների չափը կազմել է 6,621,757 ՀՀ դրամ:

Ըստ ծանուցման, վերոգրյալի համար հիմք է ընդունվել այն, որ «Էլիփս ԹեքնոլաՅն» ՍՊԸ 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ չի դիտարկվել որպես ԱԱՀ վճարող:

Հարցի պարզաբանման համար ընկերությունը դիմել է Նոր Նորքի ՀՏ և ստացել է պատասխան, որ հարցի հետագա ընթացքն ապահովելու նպատակով հարկ է դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ գանգատարկման հանձնաժողովին:

Տեղեկացվում է, որ «Էլիփս ԹեքնոլաՅն» ՍՊԸ-ն ստեղծվել է 2010 թ-ին և ստեղծման պահից գործունեությունը ծավալել է որպես ԱԱՀ վճարող ընկերություն, գբաղվելով ապրանքների ներմուծմամբ, մեծածախ և մանրածախ վաճառքով: Ընկերությունը գործունեության ողջ ընթացքում պատշաճ կերպով կատարել է բոլոր մաքսային և հարկային պարտավորությունները:

2013 թ-ին ընկերության տնօրենի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է հայտարարություն առ այն, որ 2013 թ-ի ընթացքում ընկերությունը շարունակելու է աշխատել ԱԱՀ-ի դաշտում, սակայն մեխանիկական սխալի պատճառով հայտարարության մեջ նշվել է 2013 թ-ի հունվարի 7-ը, հաշվի առնելով, որ հունվարի 7-ը 2013 թ-ի առաջին աշխատանքային օրն է: Ընկերությունը 2013 թ-ի ողջ ընթացքում շարունակելով իր գործունեությունը որպես ԱԱՀ վճարող պատշաճ կերպով կատարել է բոլոր հարկային և մաքսային պարտավորությունները:

Տվյալ դեպքում մեխանիկական սխալի պատճառով առաջացած ծանր ֆինանսական պարտավորությունները կարող են հանգեցնել ընկերության գործունեության ամբողջական խաթարմանը և սնանկացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է հաշվի առնել, որ տեղի է ունեցել մեխանիկական սխալ և վերականգնել 01.01.2013 թ-ի դրությամբ «Էլիփս ԹեքնոլաՅն» ՍՊԸ դեբետային մնացորդը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «Էլիփս Թեքնոլայն» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սակայն, հայտարարությունում թյուրիմացաբար ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը 01.01.2013 թ-ի փոխարեն նշվել է 07.01.2013 թ-ը, հաշվի առնելով, որ 07.01.2013 թ-ը հանդիսանում է առաջին աշխատանքային օրը: Ընդ որում, որ ընկերության կողմից սահմանված կարգով ներկայացվել են 2013 թ-ի ԱԱՀ-ի հաշվարկները:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Էլիփս Թեքնոլայն» ՍՊԸ 30.04.2014 թ-ի դիմումով բերված պահանջը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

«Էլիփս Թեքնոլայն» ՍՊԸ 30.04.2014 թ-ի դիմումով բերված պահանջը՝ ընկերությանը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ, բավարարել:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**